

ԱՌՆԵՏՆԵՐԻ ԳԼԽՈՒՂԵՂԻ ՀՅՈՒՄԱԿԱԾՔՆԵՐԻ ՄԻԿՐՈԷԼԵՄԵՆՏԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԷՔՍՊԵՐԵՄԵՆՏԱԼ ՀԻՊՈԿՍԻԱՅԻ ՏԱՐԲԵՐ ԱՍՏԻՃԱՆԻ ԾԱՆՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՈՒՄ

**ՏԱՐԱՍՈՎԱ Ի.Վ., ՄԱՐԿԵԿԻՉ Վ.Է., ԿԱՍՅԱՆ Ս.Ն., ՊԵՏՐԱՇԵՆԿՈ Վ.Ա.,
ՊՈԳՈՐԵԼՈՎ Ս.Վ., ՌԵԿԿՈ Ե.Կ.,**

Սոււմայի պետական համալսարան, Սոււմա, Ուկրաինա

Հանձնված է՝ 11/10/2013 թ., ընդունված է՝ 15/02/2014 թ.

Ուսումնասիրվել է պայմանական թունավոր քրոմի և թունավոր կապարի էստենցիալ միկրոտարրերի պարունակությունը (երկաթ, ցինկ, պղինձ, մանգան, կոբալտ) Նորածին առնետների գլխուղեղի հյուսվածքներում, հիպոքսիայի տարբեր աստիճանի ծանրության փորձի ժամանակ:

Նորածին առնետների գլխուղեղի հյուսվածքները բնութագրում են բարձր աստիճանի հագեցվածության և միկրոտարրերի պարունակության նշանակալի դինամիզմ (երկաթ, ցինկ, պղինձ, քրոմ, մանգան): Կյանքի առաջին շաբաթվա վերջում այդ միկրոտարրերի պարունակությունը նվազում է 1,5-10 անգամ. թունավոր կապարի մակարդակը 2,5 անգամ նվազում է. բացառություն է կազմում կոբալտը, որի պարունակությունը, հակառակը, բարձրանում է համարյա 1,2 անգամ:

Նորածին առնետների մոտ հիպոկսիայի թեթև աստիճանն առաջացնում է կոբալտի մակարդակի նվազեցում՝ երեք անգամ, երկաթը՝ 2 անգամ, մանգանը՝ 27, 65 %, քրոմը 25,84%, ցինկը՝ 16,43 %, ինչն էլ վկայում է նշանակալի դեֆիցիտի առաջացում և գլխուղեղի հյուսվածքների միկրոտարրերի կազմի անհավասարակշռություն: Հիպոկսիայի ծանր աստիճանը բնութագրում է անբավարարության հետագա բարձրացում և միկրոտարրերի անհավասարակշռություն: